ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի հունվար ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2022 թվականի հունվար ամսվա ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,656.8 մլն դրամ՝ պլանավորված 2,500 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 6.3 տոկոսով կամ 156.8 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գերակատարվել են ավելի քան 2,5 անգամ կամ ավել է հավաքագրվել 1,626.1 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 90, լուծարվել՝ 3 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են թվով 51 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 32-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 9-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 5-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 3-ը՝ ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշմամբ հաստատված միջոցառման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության ճշտության և 2 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5,899 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5,259:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 35 պայմանագրեր:

Հաշվետու ամսում «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կայացվել և ուժի մեջ են մտել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունների գանձման 2 որոշումներ՝ 4.3 մլն դրամ գումարի չափով, ԱՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացվել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունների գանձման թվով 7 որոշումներ՝ 35.8 մլն դրամ գումարի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքով սահմանված կարգով քննված 1 վարչական գործով սահմանվել է 10.0 հազար դրամ գումարի չափով վարչական տուգանք:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կատարվել է 523.6 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 5 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2021 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում ԱՀ տարածք են ներմուծվել 11,768.2 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, արտահանվել՝ 11,677.1 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում շարունակվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով հարկ վճարողներից դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել է 1 տեղեկանք, մերժվել՝ 1 դիմում:

Հաշվետու ամսում ԱՀ ՊԵԿ նախագահի հրամանով ներդրվել է պետական եկամուտների կոմիտեի պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հաշվետվողականության համակարգ: Ի կատարումն Արցախի Հանրապետության Նախագահի մոտ հունվարի 11-ին անցկացված խորհրդակցությունում տրված հանձնարարականների՝ կոմիտեի նախագահի հրամանով ստեղծվել է ռիսկային ոլորտներում իրականացվող հսկողական աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ, նախանշվել վարչարարության ոլորտում առաջիկա անելիքները:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային կարգապահության բարելավման ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կոմիտեի աշխատակիցների կողմից հարկ վճարողների մոտ իրականացվել են բացատրական աշխատանքներ գործունեությունը օրենսդրության պահանջներին համապատասխան կազմակերպելու վերաբերյալ, տրամադրվել 1110 անհատական իրազեկման թերթիկներ: Կազմակերպվել են նաև երկու հանդիպում-քննարկումներ՝ առաքում իրականացնող և առևտրի ոլորտում գործունեություն ծավալող խոշոր ու միջին հարկ վճարողների հետ:

Հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի և զանգվածային այլ լրատվամիջոցներով, տրվել հարկային կարգապահության բարձրացմանն ուղղված քարոզչական բնույթի հայտարարություններ:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով հրապարակվել է 2021 թվականի արդյունքներով առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Հունվար ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 279, ելքագրվել՝ 139 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 2 գրություն: